ՎՐԱՍՏԱՆ ՄԵԱ ՏԱՆԸ

«ՎՐԱՍՏԱՆ» (ԱՅԺԱՐՈՅՆԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 37 - 38 (16840) ՇԱԲԱԹ 9 ՄԱՅԻՍԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՅԻՍԻ 11-Ի՞Ց ԿԲԱՑՎԵՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԸ, ԽԱՆՈՒԹՆԵՐԸ, ԿՎԵՐԱՑՎԵՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Մայիսի 7-ին, Վաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի գործադիր բարձագույն իշխանության հերթական նիստը, որտեղ վարչապետը ներկայացրեց կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական անկման հաղթահարման եւ էկոնոմիկայի վերականգնման հակաճգնաժամային ծրագիրը: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում կառավարության կողմից արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների ծրագրով նախատեսված որոշակի մեղմացումները:

14 ՕՐՎԱ ՓՈԽԱՐԵՆ, ՄԵԿԺԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԱՆՏԻՆ

Կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումների թվում, Գիորգի Գախարիայի խոսքով, առաջնահերթայինը սահմանափակումներից էկոնոմիկայի ամենաեկամտաբեր ճյուղերի՝ զբոսաշրջության եւ առեւտրի ոլորտների ձերբազատումն է: Մասնավորապես, ըստ վարչապետի, պարտադիր կարանտինը Վրաստանի սահմանում պետք է նվազեցնել՝ հասցնելով մինչեւ մեկ ժամ:

- Զբոսաշրջությունը վերականգնելու համար անհրաժեշտ են վերահսկողության մի քանի կարեւոր կետեր: Նախեւառաջ, դա ե՛ւ ցամաքային, ե՛ւ օդային սահմաններն են, եւ այստեղ առողջապահության նախարարությունն արդեն ստացել է ցուցումներ, որ պետք է խստացվի սահմանին գտնվող յուրաքանչյուր անձի մուտքը,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ եթե մինչեւ հիմա անհրաժեշտ էր 14-օրյա կարանտին, ապա այն պետք է ավարտվի 1 ժամում:

- Դրա համար կան հնարավորություններ եւ տեխնոլոգիաներ, իսկ առողջապահության նախարարությունն առաջիկայում կլուծի այդ խնդիրը,- ասաց վարչապետը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈԾԱԲՆԱԿ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԱԿՏԻՎԱՑՆԵԼ»

ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱՆ՝ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՄԱԿՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԴԱՌՆՈՒՄ Է ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԸ

Հաշվի առնելով երկրի առանձին տարածաշրջաններում կորոնավիրուսի տարածման վիճակագրությունը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան կառավարության հերթական նիստում առանձնակի կարեւորեց ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերում կորոնասիրուսի դեմ պայքարի միջոցառումների, գործադիր իշխանության կողմից ձեռնարկած քայլերի, ծրագրված սոցիալական աջակցության մասին տեղեկատվական քարոզարշավի, ինչպես նաեւ մատուցվող սպասարկումների ակտիվացումը:

Նրա խոսքով, Վրաստանի ցանկացած քաղաքացու, անկախ նրա ազգային պատկանելության, արտակարգ դրության պայմաններում ծառայությունը մատուցվում է հավասարապես:

- Ուզում եմ դիմել մեր յուրաքանչյուր մունիցիպալիտետի ղեկավարությանը, որտեղ ապրում են ազգային փոքրամասնություններ, կրկնապատկել աշխատանքը, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացուն հասանելի լինի ողջ տեղեկատվությունը, արտոնությունները, որոնք վերաբերում են սոցի-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԱԾ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍԵԼ Է 20 ՄԻԼԻՈՆԻ

Ինչպես արդեն հաղորդել ենք, արտակարգ դրության եւ պարետային ժամի սահմանումից հետո, առաջին 30 օրերի ընթացքում, Վրաստանի իրավապահ մարմինների կողմից դուրս է գրվել 17 025 000 լարիի, ընդհանուր առմամբ՝ 5639 տուգանք:

Իսկ ապրիլի 30-ից մայիսի 8-ը ներառյալ, իրավապահների կողմից վավերացվել է արտակարգ դրության 938 խախտում, դուրս է գրվել 2 814 000 լարիի տուգանք: Տուգանվածները 690 ֆիզիկական անձինք են (տուգանքի գումարը կազմել է 2 088 000 լարի): 582 հազար լարիի ընդհանուր գումարով տուգանվել են 194-ը հանրային վայրերում երեք մարդուց ավելի հավաքների ու 2 մետր սոցիալական հեռավորություն պահպանելու կարգի խախտման, եւս 17 մարդ՝ 51 հազար լարի գումարով տուգանվել է ինքնամեկուսացման կարգի խախտման համար:

Ուղեւոր տեղափոխելու ու մեքենայով տեղաշարժվելու կանոնների խախտման համար տուգանվել է 31 մարդ, գումարը կազմել է 93 հազար լարի:

Հիշեցնենք, որ արտակարգ դրության կարգը խախտելու համար ֆիզիկական անձը տուգանվում է 3 000, իսկ իրավաբական անձը՝ 15 000 լարիով:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 9-ին աշխարհը նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ տարած Մեծ հաղթանակի 75-րդ տարին:

1945 մայիսի 9-ին ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, կիսաքանդ Ռայխստագի վրա փողփողացող Հաղթանակի դրոշը ազդարարեց խորհրդային ժողովրդի համար Հայրենական մեծ պատերազմի ավարտը:

Ապա ստորագրվեց Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում, հաղթանակով պսակվեց 1418 օր ու գիշեր տեւած մահուկենաց պատերազմը:

Այդ օրը նշվում է Վրաստանում: Ըստ սահմանված ավանդույթի, Վրաստանի ղեկավարները, քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, շարքային քաղաքացիները մայրաքաղաքի Վակեի Հաղթանակի զբոսայգում հարգանքի տուրք են մատուցում ֆաշիզմի դեմ պայքարի զոհերի հիշատակին:

Այս տարի, կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում, հոծամարդ երթեր եւ զանգվածային միջոցառումներ չեն անցկացվում:

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՅՈՑ ԵՌԱՏՈՆ

Մայիսի 9-ին համայն հայությունը տոնում է իր հաղթանակների եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի՝ 75, Արցախի բանակի կազմավորման ու Շուշիի ազատագրման 28-ամյակները:

Այդ օրը, Հայոց եռատոնի կապակցությամբ, Հայաստանի բարձրաստիճան այրերը կայցելեն Հաղթանակի զբոսայգի, որտեղ «Մայր Հայաստան» արձանի մոտ կտեղադրեն ծաղկեպսակներ: Այդ արարողությունից հետո, Հայրենական մեծ պատերազմի մի քանի վետերաններ կայցելեն Հաղթանակի զբոսայգի մեծարման համար:

COVID-19-ով պայմանավորված մայիսի 9-ին փակ են լինելու «Հաղթանակ» զբոսայգու եւ «Եռաբլուր» զինվորական պանթեոն տանող բոլոր ճանապարհները: Եռատոնի շրջանակում տեղի կունենան միայն պաշտոնական արարողակարգային միջոցառումներ, իսկ զանգվածային միջոցառումները հետաձգվում են: Կանցկացվի միայն օդային շքերթ՝ ՍՈՒ-30 ինքնաթիռների մասնակցությամբ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

600 ԼԱՐԻԻ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ, ԵՎՍ 300 ԼԱՐԻ՝ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՉՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Մայիսի 9-ին, ֆաշիզմի դեմ տարած Հաղթանակի 75-ամյակի կապակցությամբ, Վրաստանի կառավարության մայիսի 6-ի թիվ 769 հրամանի համաձայն, երկրորդ աշխարհամարտի մասնակիցները եւ երկրորդ աշխարհամարտում զոհվածների ընտանիքի անդամները կստանան միանվագ սոցիալական օգնություն:

Առողջապահության նախարարության տվյալներով, երկրորդ աշխարհամարտի մասնակիցների համար օգնության չափը կկազմի 600, իսկ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների ընտանիքի անդամների համար՝ 300 լարի:

Թբիլիսիում միանվագ դրամական սոցիալական օգնություն տրամադրելու գործընթացը կվերահսկի Թբիլիսիի քաղաքապետարանը, իսկ Վրաստանի մյուս շրջաններում բնակվող Երկրորդ աշխարհամարտի մասնակիցներին եւ երկրորդ աշխարհամարտում զոհվածների ընտանիքի անդամներին գումարը կփոխանցի սոցիալական ծառայության գործակալությունը:

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԵԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ 623 ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻՑ ԱՊԱՔԻՆՎԵԼ Է 288-Ը

Մայիսի 7-ի դրությամբ, լաբորատորիական ստուգմամբ կորոնավիրուս է հաստատվել 623 մարդու մոտ, որից 288-ն արդեն ապաքինվել են:

Կորոնավիրուսի հետեւանքով, երկրում մահացել է 10 մարդ: Բուժման նպատակով արտասահմանից Վրաստան է տեղափոխվել երեք հիվանդ: 4702 քաղաքացի գտնվում է կարանտինում, իսկ ստացիոնար վերահսկողության տակ է 459 բուժառու:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեի հայտարարությամբ, Վրաստանում կորոնավիրուսով վարակվածների 33 տոկոսը Քվեմո Քարթլիի բնակիչներ են:

- Վրաստանում գրանցված դեպքերից մոտ 200-ը Քվեմո Քարթլիում է: Վարակման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Բոլնիսիում՝ 117 դեպք, այնուհետեւ՝ Թեթրիծղարոյում՝ 48-ը եւ 33-ը՝ Մառնեուլիում,- ասել է Գամդրելիձեն:



Վերջին 24 ժամվա ընթացքում արձանագրվել է վարակման 6 նոր դեպք:

Մայիսի 8-ին Գորիի ռազմական հոսպիտալում մահացել է 45-ամյա մի կին. նա թվով 10-րդ մահացածն է:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿԴԱՌՆԱ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՂ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑՈՎ

Մայիսի 5-ին երկրի վարչապետ Գիորգի Գախարիայի մասնակցությամբ կայացավ զբոսաշրջության վերականգնման թեմայով աշխատանքային հանդիպում, որտեղ նշվեց, որ կառավարությունն ինտենսիվ աշխատում է զբոսաշրջության ոլորտի վերականգնման ռազմավարական ծրագրի շուրջ:

Ինչպես հայտարարեց վարչապետը, տնտեսության վերականգնման եւ հետճգնաժամային կառավարումը կառավարության համար դառնում է գերակա առաջնահերթություն, եւ խիստ կարեւոր է ձեռնարկել արդյունավետ քայլեր, որպեսզի երկիրն իր հաստատուն տեղն ունենա գլոբալ մրցակցության մեջ:

Աշխատանքային հանդիպման ավարտին, տուրիստական հատվածի ներկայացուցիչների հետ անցկացվեց առցանց հանդիպում, որից հետո Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան հայտարարեց, որ ակտիվ աշխատանք է տարվում, որպեսզի Վրաստանը դառնա առաջին երկրներից մեկը, ով կվերադարձնի զբոսաշրջիկներին:

Նա խոսքով, կորոնավիրուսից ամենաշատը տուժել է զբոսաշրջային ոլորտը: Արդեն մարտին եկամուտները նվազեցին 70 տոկոսով, նախորդ տարվա հետ համեմատ: Նաթիա Թուրնավան ավելացրեց, որ այս ոլորտին ոտքի կանգնելու համար ժամանակ է պետք, նաեւ հիշեցրեց, որ իշխանությունները առաջին օրվանից աջակցել են դրան:

Ներկայումս, հյուրանոցային ու ռեստորանային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին, զբոսաշրջային գործակալություններին, տրանսպորտային ընկերություններին, էքսկուրսային կազմակերպություններին կառավարությունը մինչեւ նոյեմբերի 1-ն ազատել է եկամտահարկից, իսկ 4 ամիս՝ գույքահարկից: Սա վերաբերել է Վրաստանում գործող 18 հազար կազմակերպության: Բացի այդ, մի շարք կազմակերպություններ մեկ տարով ազատվել են հողի վարձավճարներից:

ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԱՌԱՏԱՁԵՌՆ ԲԱՐԵՐԱՐԸ ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ Է

«Ո՞վ է ամենառատաձեռն դոնորը կորոնավիրուսի դեմ պայքարում» այս վերնագրով հոդված է հրապարակել ֆրանսիական հեղինակավոր Contrepoints պարբերականը՝ նշելով աշխարհի այն մեծահարուստների անունները, ովքեր ֆինանսական խոշոր ներդրում են ունեցել Covid-19-ի դեմ պայքարում:

Հոդվածում, որտեղ գլխավոր լուսանկարում ամենահարուստ գործարար, Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին է, հաշվարկվել է աշխարհի հարուստների նվիրաբերած գումարները՝ ըստ բնակչության մեկ շնչի:

«Չնայած համավարակի դեմ պայքարում անվանի բարերարների բազմամիլիոն նվիրաբերումներին, մեկ բնակչի հաշվով ամենախոշոր նվիրաբերումն իրականացրել է 64-ամյա միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին: Նրա ունեցվածքը 4,5 միլիարդ եվրո է կազմում, համավարակի դեմ պայքարի համար հատկացրել է 30 մլն դոլար: 3,9 միլիոն բնակչից յուրաքանչյուրին այստեղից հասնում է 7,51 դոլար»,- գրում է պարբերականը:

Պարբերականը հատուկ ենթավերնագրում նաեւ անդրադարձել է համավարակի դեմ Վրաստանի հաջող փորձին: Նշելով, որ հետխորհրդային այս երկիրը ճիշտ ժամանակին է քայլեր ձեռնարկել, այժմ վարակակիրների ու մահվան ելքերի ցուցանիշով անհամեմատ լավ վիճակում է:



COVID-19.

ՄՈՏ ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ՎԱՐԱԿՎԱԾ, ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ՝ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակով պայմանավորված COVID-19-ով վարակվածների թիվն անցել է 3 954 252-ը, մահացածների թիվը հասել է 271 975-ի: Ապաքինվել է 1 360 885 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում հայտնված ԱՄՆ-ում 1 296 345 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 77 173 է: Ընդհանուր ցուցանիշով, երկրորդ տեղում գտնվող Իսպանիայում հաստատված դեպքերի թիվը 260 117 է: Մահացության ցուցանիշը կազմում է 26 299: Իտալիայում հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 215 858 է: Վարակից մահացել է 29 958 մարդ: Մեծ Բրիտանիայում գրանցվել է 206 715 հաստատված դեպք, մահացել է 30 615 մարդ: Ռուսաստանում կա 187 859 հաստատված դեպք: Վարակի հետեւանքով, մահացել է 1 723 մարդ: Ֆրանսիայում 174 791 հաստատված դեպք կա, մահացել է 25 987 մարդ: Գերմանիայում վարակակիրների թիվը հասել է 169 430-ի, մահացածներինը՝ 7 392-ի: Թուրքիայում 133 721 հաստատված դեպք կա, մահացել է 3 641 մարդ: Ինչ վերաբերում է համաճարակի սկիզբ հանդիսացող Չինաստանին, ապա հաստատվել է 82 886 հիվանդության դեպք, մահացածների թիվը կազմում է 4 633:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՔ ԺԱՄՈՒՄ ՀԱՆԳԱՆԱԿՎԵՑ 7,4 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ

Եվրոպական հանձնաժողովը, որը մայիսի 4-ին կազմակերպել էր «Գլոբալ պատասխան կորոնավիրուսին» խորագրով դոնորների առցանց համաժողով, կարողացել է 3 ժամում հավաքել 7,4 մլրդ եվրո կորոնավիրուսի դեմ պայքարի համար:

Ֆինանսական միջոցներ նվիրաբերել են ինչպես տարբեր երկրներ, այնպես էլ բիզնես, ֆինանսական ոլորտի ներկայացուցիչներ, գիտահետազոտական ընկերություններ:

ՄԱՅԻՍԻ 11-ԻՑ ԿԲԱՑՎԵՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԸ, ԽԱՆՈՒԹՆԵՐԸ, ԿՎԵՐԱՑՎԵՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՄԱՅԻՍԻ 11-ԻՑ ԿԲԱՑՎԵՆ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԸ, ԿԳՈՐԾԻ ՆԱԵՎ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ

Կառավարության նիստում հակաճգնաժամային ծրագրի ներկայացմանը, վարչապետ Գիորգի Գախաիան հայտարարեց, որ մայիսի 11-ից բոլոր տեսակի արտադրամասերն ու խանութները, բացառությամբ՝ հագուստի եւ կոշկեղենի խանութների:

- Մայիսի 11-ից մենք կբացենք բոլոր տեսակի արտադրամասերը: Կբացվեն նաեւ բոլոր տեսակի մանրածախ եւ մեծածախ խանութները, որոնք փողոցից մուտք ունեն: Սա չի վերաբերում առեւտրական կենտրոններին (մոլերին), ինչպես նաեւ հագուստի եւ կոշիկի խանութներին,- նշեց Գիորգի Գախարիան:

ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ ԸՆԴՈՒՆԵԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ

Որպես սահմանափակումների մեղմացման առաջին քայլ՝ հակաճգնաժամային ծրագրով նախատեսված է, որ հունիսի 15-ից Վրաստանը կբացվի տեղական տուրիստական ծառայություններ մատուցելու համար, իսկ արդեն հուլիսի 1-ից պատրաստ կլինի ընդունել օտարերկրյա զբոսաշրջիկների:

- Մենք դա կանենք՝ ինչպես հարեւան երկրների հետ ցամաքային սահմաններում ապահով միջանցքներ ստեղծելով, այնպես էլ մեզ համար զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող երկրների հետ երկկողմ բանակցությունների առումով, անվտանգ միջանցքների ստեղծման հնարավորությամբ: Այս բանակցություններն արդեն սկսվել են,- հայտարարեց վարչապետը:

Ծրագրված միջոցառումները մանրամասնեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան: Նրա խոսքով, զբոսաշրջության վերականգնման երրորդ փուլում՝ հուլիսի 1-ին, երկիրը պատրաստ կլինի ընդունել միջազգային զբոսաշրջիկներին:

- Նույն ժամանակահատվածում, աստիճանաբար, կվերականգնվեն թռիչքները,- ասաց Նաթիա Թուրնավան եւ հավելեց, որ միաժամանակ ամեն ինչ արվելու է Վրաստանի բնակչության առողջության պահպանմանը համապատասխան:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՁԴԱԿԸ, ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱ ՎԵՐՋ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄՆ Է

Վարչապետի խոսքով, զբոսաշրջության ոլորտում աշխատող ընկերությունների եկամտահարկերի գանձումը հետաձգվելու է մինչեւ տարեվերջ:

- Զբոսաշրջության ոլորտում գործող ընկերությունների եկամտահարկերի գանձումը հետաձգվելու է 9 ամսով՝ մինչեւ տարեվերջ: Մենք չենք կարող խոստանալ որեւէ մեկին եկամտի գանձման ամբողջական չեղարկում, բայց հնարավոր է խոսել հետաձգման եւ հետագա, աստիճանաբար վճարման սխեմաների մասին,- նշեց Գիորգի Գախարիան:

ՄԱՅԻՍԻ 11-Ի՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ, ԻՍԿ ՄԱՅԻՍԻ 14-Ի՝ ՌՈՒՍԹԱՎԻՈՒՄ ԵՎ ԳԱՐԴԱԲԱՆԻՈՒՄ ԿՎԵՐԱՑՎԵՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ներկայացնելով կառավարության հակաճգնաժամային ծրագիրը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան առանձնակի ուշադրություն հատկացրեց երկրի քաղաքներում տրանսպորտային երթեւեկության սահմանափակումների թեմային՝ հայտարարելով, որ մայիսի 11-ից Թբիլիսիում կվերանան տեղաշարժման բոլոր սահմանափակումները, իսկ մայիսի 14-ից ամբողջությամբ կբացվեն Ռուսթավին եւ Գարդաբանին:

- Մայիսի 11-ից ամբողջությամբ կբացվի մուտքը դեպի Թբիլիսի: Ինչպես գիտեք, Թբիլիսին փակ էր: Մայիսի 11-ից՝ երկուշաբթի օրվանից, Թբիլիսիում կվերանան մուտքի եւ ելքի բոլոր սահմանափակումները: Սա չի նշանակում, որ ամբողջ երկրում կվերանա պարետային ժամը: Մայիսի 14-ից ամբողջությամբ կբացվի երթեւեկությունը Ռուսթավիում եւ Գարդաբանիում,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Նշենք, որ մայիսի 5-ից սահմանափակումները վերացել են Քութայիսիում եւ Բաթումիում:

Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, մայիսի 18-ին Մառնեուլին ամբողջությամբ կբացվի:

- Մառնեուլիում համավարակի իրավիճակով պայմանավորված անհրաժեշտ է անցկացնել մի շարք թեստավորումներ, այդ իսկ պատճառով մեզ պետք է այս լրացուցիչ ժամանակ,- նշեց Գիորգի Գախարիան:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈԾԱԲՆԱԿ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԱԿՏԻՎԱՑՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ալական աջակցության քայլերին,- նշեց վարչապետը:

Նա նահանգապետերին կոչ արեց շտապ քայլեր ձեռնարկել կառավարության կողմից իրականացվող միջոցառումները Վրաստանի բոլոր քաղաքացիներին հավասարապես բաշխելու ուղղությամբ:

Կառավարության նիստում վարչապետն անդրադարձավ նաեւ էկոնոմիկայի հարցերին՝ նշելով, որ տնտեսության վերականգնման հարցը կառավարության համար առաջնահերթություն է: Նրա խոսքով, դա կախված կլինի համավարակի արդյունավետ կառավարումից:

- Տնտեսության վերականգնման, երկրի հետծգնաժամային կառավարումը մեզ համար առաջնահերթություն է, սակայն այս ամենի հնարավորությունը մենք կունենանք միայն այն դեպքում, երբ առողջապահության նախարարությունը արդյունավետ կառավարի համավարակը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետի խոսքով, յուրաքանչյուր քաղաքացի պետք է հասկանա, որ բժշկական պաշտպանիչ դիմակը, սոցիալական հեռավորությունը մեր կյանքի մաս են դառնում: Այս նորմերը պահպանելը ըստ կառավարության ղեկավարի, միակ միջոցներն են, որով երկիրը կկարողանա արագորեն տնտեսապես վերականգնվել:



ԱՃԵԼ ԵՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԸ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը համեմատել է 2020 թվականի ապրիլին գրանցված սննդամթերքի գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալների հետ:

Տվյալների համաձայն, այս տարի նախորդ տարվա համեմատ, մրգի գինն աճել է 45 տոկոսով, կաթնամթերքինը՝ 23, մսամթերքինը՝ 15, հացաբուլկեղենինը՝ 8,4 տոկոսով: Ծառայության տվյալներով, 2020 թվականի տարեկան գնաճի մակարդակը կազմել է 6,9 տոկոս:

Գնաճի վրա հիմնական ազդեցությունն ունեցել է մթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների գների բարձրացումը՝ 16,1 տոկոսով:

Հարկ է նշել նաեւ, որ այս տարի աճել են նաեւ առողջապահության ոլորտի գները՝ մոտ 4,9 տոկոսով:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, երկրում այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում գրանցված հանցագործությունների թիվը կազմել է 16 035, ինչը 2,5 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալները:

Մասնավորապես, եթե անցյալ տարվա առաջին երեք ամիսների ընթացքում կյանքի դեմ հանցագործությունների թիվը կազմում էր 258, ապա այս տարի տվյալներն աճել են՝ հասնելով 833-ի:

Աճել է նաեւ առողջությանը վնաս պատճառելու հանցագործությունների թիվը՝ 2 868 դեպք 3 ամսվա ընթացքում: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների թիվը եւս աճել է՝ կազմելով 1 075, մինչդեռ նախորդ տարի այս ցուցանիշը կազմում էր 477:

150 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվրախորհուրդը մտադիր է Վրաստանին 150 միլիոն եվրո ֆինանսական օգնություն ցուցաբերել:

Ըստ տարածված տեղեկության, ԵՄ հարեւանության քաղաքականությանը մասնակից 10 երկրի համար, ընդհանուր առմամբ, կտրամադրվի 3 միլիարդ եվրոյի չափով մակրոֆինանսական օգնություն:

Ֆինանսական աջակցության նպատակն է, աջակցել Covid-19-ով պայմանավորված տնտեսական խնդիրների լուծմանը: Ֆինանսական աջակցություն նախատեսված է անհրաժեշտությունների ապահովման համար, որպեսզի ուժեղանա երկրների մակրոտնտեսական կայունությունը:

Գումարը հասանելի կլինի 12 ամսվա ընթացքում եւ կտրվի երկու փուլերով: Վարկերը 15 տարվա ընթացքում կունենան առավելագույն ժամկետ: Օժանդակությունը ենթարկվում է Փոխըմբռնման հուշագրին (MOU), որը համաձայնեցված է բոլոր գործընկեր երկրների եւ Հանձնաժողովի միջեւ:

Որոշումն ուժի մեջ կմտնի Եվրախորհրդարանի եւ Խորհրդի վավերացումից հետո: Ֆինանսական աջակցության նախաձեռնողը Եվրահանձնաժողովն է: Նախաձեռնության համաձայն, Ալբանիային կտրամադրվի 180 միլիոն եվրո, 250՝ Բոսնիային եւ Հերցեգովինային, 200՝ Հորդանանին, 100՝ Կոսովոյին, 100՝ Մոլդովային, 60՝ Մոնտենեգրոյին, 160՝ Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությանը, 600 միլիարդ՝ Թունիսին եւ 1,2 միլիարդ եվրոն՝ Ուկրաինային:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՎ ԱՆՑԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԳՆԱՑՔԸ

Կարսից - Թբիլիսի - Բաքու երկաթուղային գծով, ռեկորդային երկարությամբ գնացք է ուղարկվել:

Ինչպես հաղորդում է «Report»-ը, 1,050 մ երկարությամբ գնացքը, որը փոխադրում էր 2400 տոննա տարողությամբ բեռ՝ 50 բեռնատար վագոնի 100 բեռնախցիկներով, մայիսի 5-ին անցել է Ախալքալաքիի կայարանով:

Բեռնատար գնացքը տեղափոխում էր ավտոպահեստամասեր, գյուղատնտեսական տեխնիկա, կերամիկական արտադրանք եւ անձնական խնամքի պարագաներ՝ Մերսինից, Կայսերիից, Անկարայից, Իզմիթից, Ստամբուլից՝ դեպի Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան եւ Թուրքմենստան:

Հիշեցնենք, որ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղին շահագործման է հանձնվել 2017-ի հոկտեմբերի 30-ին: Երկաթուղային գիծն Ախալքալաքիում իրար է միացնում Ասիայի եւ Եվրոպայի երկաթուղային ցանցերը: Սա ամենակարճ ճանապարհն է Ասիայի եւ Եվրոպայի միջեւ: ԲԹԿ-ն թույլ է տալիս կրկնակի անգամ կրճատել բեռնափոխադրման ժամանակը: Երկաթուղին հեշտացնում է Կենտրոնական Ասիայի երկրների՝ Թուրքմենստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Աֆղանստանի մուտքը եվրոպական եւ համաշխարհային շուկաներ:

Ընդհանուր 846 կմ երկարություն ունեցող երկաթուղու 263 կմ-ն անցնում է Վրաստանով, 504 կմ-ը՝ Ադրբեջանով, 79-ը՝ Թուրքիայով: ԲԹԿ-ով նախնական փուլում նախատեսվում է փոխադրել 5 միլիոն տոննա, իսկ տարողունակությունը հետագա փուլերում կավելանա մինչեւ 17 միլիոն տոննա եւ ավելի:

ՇՇՄՈՆԱՎԼԵԳՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ՕՆԼԱՅՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության սպասարկումների դեպարտամենտի պետ Լեւան Դգեբուաձեն օնլայն խորհրդաժողով անցկացրեց «Հաշվապահների միության» անդամների հետ:

Վերոնշյալ տեսախորհրդաժողովին մասնակցեցին շուրջ 15 օնլայն հաղորդակցական խմբեր: Կողմերը խոսեցին հակաճգնաժամային ծրագրով նախատեսված փոխհատուցումների եւ հարկային արտոնությունների մասին, քննարկեցին գործարարության աջակցությանն ուղղված տնտեսական նախագծերը:

Լեւան Դգեբուաձեն նշեց, որ կառավարության կողմից առաջադրված հակաճգնաժամային ծրագրում նշանակալի բաղադրիչը քաղաքացիների նպատակային սոցիալական օգնությունն է եւ բիզնես աջակցությունը:

- Բոլոր այն քաղաքացիները, ովքեր եկամտային կորուստներ ունեն, պետության կողմից կստանան օգնություն: Մասնավորապես, հարկային օրենսգրքի փոփոխությունները առնչվում են պետության կողմից հարկային վճարումների նպաստավորմանը, որի նպատակը աշխատատեղերի պահպանումն է, իսկ կառավարության որոշումը ուղղված է սոցիալական այն միջոցառումների խրախուսմանը, որը վերաբերում է առանց եկամտի մնացած մարդկանց նպատակային օգնությանը,- հայտարարեց Լեւան Դգեբուաձեն:

Եկամուտների ծառայության սպասարկումների դեպարտամենտի պետը նշեց նաեւ, որ յուրաքանչյուր ընկերություն պատասխանատու վերաբերմունք կցուցաբերի կառավարության կողմից առաջադրված ծրագրին եւ հարկային վճարումների արտոնություններից օգտվելու, ինչպես նաեւ աշխատողների փոխհատուցումը ստանալու նպատակով սպառիչ տեղեկատվություն կներկայացի համապատասխան գերատեսչությանը:

Օնլայն հանդիպումն անցկացվեց հարցուպատասխանի ձեւաչափով եւ «Հաշվապահների միության» ներկայացուցիչներին տրվեց իրենց հետաքրքրող հարցերի սպառիչ պատասխանները ստանալու հնարավորություն:

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության կազմակերպմամբ, երկրում նոր կորոնավիրուսի համավարակի արդյունքում տուժածների աջակցության ծրագրի շրջանակներում, Ռուսթավիի սերվիս-կենտրոնում անցկացվեց տեղի արտադրական սուբյեկտների ներկայացուցիչների հետ հերթական աշխատանքային հանդիպումը:

Հանդիպման մասնակիցներին տրվեց կառավարության կողմից ընդունված հակաճգնաժամային ծրագրի երկրորդ փուլով նախատեսված փոխհատուցումների եւ հարկային արտոնությունների կապակցությամբ սահմանված կարգավորումներին մանրամասն ծանոթանալու հնարավորություն:

Ռուսթավիի սերվիս-կենտրոնի մենեջեր Սոլոմոն Նանիտաշվիլին հանդիպման մասնակիցներին ներկայացրեց կորոնավիրուսի համավարակի արդյունքում տուժածների աջակցության ծրագիրը: Նա նշեց նաեւ, որ Վրաստանի ողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարելու պատճառով հարկատուներին տրվել է եկամուտների ծառայության տարբեր ծառայություններից էլեկտրոնային հեռավար կարգով օգտվելու հնարավորություն:

Վերոնշյալ հանդիպումն անցկացվեց հարցուպատասխանի ձեւաչափով եւ գործարար շրջանակների ներկայացուցիչները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

COVID - 19

Ե՞ՐԲ ԿՀԱՂԹԱՀԱՐՎԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ

ՄԵՐ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՈՒ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Բացառված չէ, որ Վրաստանում կորոնավիրուսը առաջիկա մի քանի շաբաթվա ընթացքում վերջնականապես հաղթահարվի: Նման հուսադրող ենթադրություն են անում Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության կենտրոնի ու երկրում գործող տարբեր կլինիկաների ղեկավարները՝ հենվելով այն նշանակալի փաստի վրա, որ վերջին օրերին երկրում վարակման նոր օջախներ չեն հայտնաբերվել, նվազել է նաեւ վարակվածների թիվը:

Ինչպես նշեց Վրաստանի հիվանդությունների վրահսկման կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն, երկրում տարվում են տարբեր հետազոտություններ, որոնց մասին հանրությունը ժամանակին կտեղեկացվի:

- Սպասենք, քիչ ժամանակ է մնացել, շատ հետաքրքիր հետազոտություններ են,-հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Բայցեւայնպես, Վրաստանում ե՞րբ վերջնականապես կհաղթահարվի կորոնավիրուսը: Հիվանդությունների վերահսկման կենտրոնի, ինչպես նաեւ երկրում գործող կլինիկաների ղեկավարներին հասցեագրված հարցին ի պատասխան, մասնակիցները ներկայացրին տարբեր ժամանակահատվածներ, թեեւ մեծամասնությունը հուսով է, որ առաջիկա երեք շաբաթները վերջնականապես կհստակեցնեն իրավիճակը, իսկ ինչ վերաբերում է վերջնական հաղթահարմանը, ապա, ամենայն հավանականությամբ, դա կլինի ընթացիկ տարվա ամռանը:

Ինչեւէ, վերոնշյալ հարցի պատասխանը մենք փորձեցինք գտնել միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված հետազոտություններում: Մասնավորապես, Սինգապուրի տեխնոլոգիաների ու դիզայնի համալսարանի (SUTD) մասնագետները, ելնելով ինչ-ինչ տեղեկատվությունից, փորձեցին հաշվարկել տարբեր երկրներում կորոնավիրուսի համաճարակի հաղթահարման ժամկետները:

Վերոնշյալ հետազոտության համաձայն, Վրաստանում, 97 տոկոս հավանականությամբ, Covid -19-ի համավարակը Վրաստանում կհաղթահարվի 2020 թվականի հունիսի 7-ին, իսկ 99 տոկոս հավանականությամբ համաճարակի ավարտը կարձանագրվի 2020 թվականի հունիսի 26-ին: Ինչ վերաբերում է 100 տոկոսանոց հավանականությանը, ապա հետազոտողների ենթադրությամբ, տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 29-ին:

«Հետազոտությունների արդյունքները պաշտոնապես հրապարակվեցին հաստատված դեպքերի մոնիթորինգի հիման վրա: Մշտական ընթացքի մեջ է SIB-ի (կասկածելի, վարակված, ապաքինված մարդկանց դեպքերի մոնիթորինգ) մոդելով տարբեր երկրների տվյալների ուսումնասիրությունը, որպեսզի հաշվարկվի տարբեր երկրներում համավարակի տեւողությունը: Հաշվի առնելով արագ փոփոխվող իրավիճակը, հետազոտողները առօրյա պայմանակարգով նորացնում են իրենց կանխագծումները»,- նշված է համալսարանի պաշտոնական կայք-էջում:

Ինչ վերաբերում է Վրաստանի հարեւան երկրների հարցով հետազոտողների եզրահանգումներին, ապա միանգամից ասենք, որ համալսարանի ddi.sutd.edu.sg կայք-էջում Հայաստանում համավարակի ավարտի վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի ներկայացվել:

Իսկ Ռուսաստանում, փորձագետների ենթադրությամբ, համավարակի ավարտման ժամկետը տատանվում է մայիսի 9-ից օգոստոսի 19-ը ժամանակահատվածում, Ադրբեջանում՝ մայիսի 7-ից հունիսի 15-ը, Թուրքիայում՝ մայիսի 9-ից հուլիսի 8-ը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում փորձագետների եզրահանգումը, այսօրվա դրությամբ, Covid-19-ից առանձնակի տուժած երկրների առնչությամբ: Մասնավորապես, վարակվածների եւ կորոնավիրուսից մահացածների թվով աշխարհում առաջին տեղը առայժմ զբաղեցնող Ամերիկայի Միացյալ Նահանգների կապակցությամբ հետազոտողները վարակի վերացման ժամկետը սահմանել են մայիսի 14-ից սեպտեմբերի 4-ը ժամանակահատվածը, Իտալիայում՝ մայիսի 9-ից օգոստոսի 30-ը, Իսպանիայում՝ մայիսի 2-ից օգոստոսի 2-ը, Ֆրանսիայում՝ մայիսի 7-ից օգոստոսի 8-ը, Մեծ Բրիտանիայում՝ մայիսի 16-ից մայիսի 28-ը ժամանակահատվածները:

ՎԱՐԱԿՄԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ ՄԵԾԱՊԵՍ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ԲԺՇԿԱԿԱՆ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆՈՑՆԵՐԻ ՀԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի տարածման կանխման նպատակով Վրաստանում, համավարակի հայտարարման առաջին օրերից սկսվեց պահպանիչ դիմակների արտադրությունը:

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության տեղեկատվությամբ, մայիսի 4-ի դրությամբ երկրում արտադրվել է 2 651 183 բժշկական դիմակ, դեղատներին հանձնվել է մոտ 1 400 000 դիմակ, որից 1 200 000-ը վաճառվել է: Հիշեցնենք, որ առաջին փուլում Վրաստանում արտադրված բազմակի օգտագործման դիմակները բաժանվել են թոշակառուներին եւ նրանց, ովքեր աշխատանքի բերումով, հաճախ են շփվում իրար հետ:

Թեպետ հարկ է զգուշացնել, որ պաշտպանիչ դիմակների եւ ձեռնոցների չափազանց շատ ու սխալ օգտագործելը համավարակի պայմաններում ոչ միայն օգուտ չի բերի, այլեւ կհանգեցնի նրան, որ դիմակները չեն բավարարի այն մարդկանց, ովքեր իրապես ունեն դրանց կարիքը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) խորհուրդ է տալիս դիմակ կրել միայն հիվանդ մարդկանց ու նրանց, ովքեր տնային պայմաններում հիվանդ են խնամում: Իսկ բժշկական հաստատություններում խորհուրդ է տրվում հատուկ դիմակներ ու նաեւ այլ պաշտպանիչ հագուստ կրել: Ինչ վերաբերում է դիմակների լայն օգտագործմանն, ապա ԱՀԿ-ն երկրներին կոչ է անում նման խորհրդատվություն տալուց առաջ հաշվի առնել դրանց արդյունավետությունը, քանի որ միայն դիմակ կրելը Covid-19-ը բուժելու համար բավարար չէ: Պետք է շարունակել վեր հանել, թեստավորել, մեկուսացնել, բուժել բոլոր հիվանդներին, հետեւել շփումներին:

Միաժամանակ, կոչ է արվում նաեւ խուսափել տնայնագործական դիմակների օգտագործումից: Մասնավորապես, ինչպես տեղեկացնում է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի վարակիչ հիվանդությունների դեպարտամենտը, համավարակի պայմաններում անհատ «դիմակագործներն» օգտվում են առիթից, տնային պայմաններում կտորից ու այլ նյութերից բազմակի օգտագործման դիմակներ են կարում ու համացանցի միջոցով վաճառում՝ միջինը 3-5 լարիով:

Ինչ վերաբերում է ձեռնոցներին, ապա Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի վարակիչ հիվանդությունների դեպարտամենտի ղեկավար Խաթունա Զախաշվիլու հայտարարությամբ, ձեռնոցների անվերջ եւ սխալ օգտագործումը հնարավոր է վնաս պատճառի բնակչությանը:

Նրա խոսքով, քաղաքացիները ձեռնոցներ օգտագործելիս մեծ զգուշություն պետք է ցուցաբերեն:

- Ձեռնոցներ օգտագործելիս՝ զգույշ եղեք, չմտածեք, որ եթե ձեռնոցներով եք, ուրեմն անվտանգ եք: Ձեռնոցները նույնպես աղտոտվում են, ինչպես մեր ձեռքերը, եւ եթե տեղի չունենա ձեռնոցների հաճախակի փոփոխում, նույն վտանգը կստեղծվի, ինչ աղտոտված ձեռքերի դեպքում: Ավելի լավ է ձեռքերը հաճախակի լվանաք, քան ձեռնոցներ օգտագործեք առանց փոխելու,- հայտարարեց Խաթունա Զախաշվիլին:

Ո՞Վ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՍՏԱՆԱԼ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, երկրի կառավարության հակաճգնաժամային ծրագրով կոնկրետ միջոցառումներ են նախատեսված քաղաքացիների կոնկրետ խմբերին տնտեսական աջակցություն եւ նյութական փոխհատուցում ցուցաբերելու ուղղությամբ:

Մասնավորապես, վարձու աշխատողները, ովքեր այլեւս չեն վարձատրվում, գտնվում են չվճարված արձակուրդում կամ ազատվել են աշխատանքից, վեց ամսվա ընթացքում կստանան պետությունից ամսական 200 լարի, ինքնազբաղ անձինք կամ ոչ պաշտոնապես զբաղված անձինք կառավարությունից կստանան միանվագ ֆինանսական օգնություն՝ 300 լարի, եթե հաստատված է եկամտի կորուստը, Վրաստանում հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ անչափահասները, 6 ամսվա ընթացքում ամսական 600 լարի կստանան, միանվագ 300 լարիի չափով փոխհատուցում կարող են ստանալ նաեւ չգրանցված վարորդները, ովքեր մունիցիպալիտետի ներսում ուղեւորների փոխադրմամբ են զբաղվել, աշակերտների փոխադրմամբ, ինչպես նաեւ նրանք, ովքեր գյուղատնտեսական արտադրանքները ռեստորաններին եւ այլ հաստատություններին են հանձնել: Ընդ որում՝ ինքնազբաղ անձինք մայիսի 21-ից կկարողանան իրենց տվյալները տեղադրել հատուկ վեբ-կայքում եւ ընթացակարգը կտեւի մինչեւ հունիսի 1-ը: Վերոնշյալ խմբի քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու համար պետական բյուջեից հատկացվում է մոտ 75 հազար լարի:

Ինչ վերաբերում է կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված սոցիալական օգնությունից օգտվելու հարցին, ապա, խոսելով ամսական 200 լարիի հավակնող վարձու աշխատողների մասին, Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամիլա Բարկալաիայի խոսքով, նրանց ցուցակները կազմելու է եկամուտների ծառայությունը, որը կներկայացվի մեր զբաղվածության գործակալությանը:

- Պաշտոնապես վարձու այն անձինք, ովքեր պաշտոնապես աշխատանքի են ընդունվել, հարկ չեն ունենա որեւէ լրացուցիչ փաստաթղթեր եւ լրացուցիչ գրանցումներ անել,- ասաց նա:

Փոխնախարարի խոսքով, վերոնշյալ օգնությանը հավակնում է շուրջ 350 հազար քաղաքացի:

Հաշմանդամության համար նախատեսված ամսական 600 լարիի ստացմանը կարող է հավակնել շուրջ 40 հազար մարդ: Ծրագրի այդ կետերի կատարման համար առանձնացվում է շուրջ 25 միլիոն լարի:

Ավելացնենք, որ Թբիլիսիի քաղաքապետարանի որոշմամբ, A եւ B կատեգորիաների տաքսիների վարորդները, որպես ինքնազբաղ, նույնպես միանգամյա օգնություն կստանան:

Ինչպես նշեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, օգնություն ստանալու ընթացակարգերի մասին քաղաքացիները կարճ հաղորդագրություններ կստանան:

- A եւ B կատեգորիաների տաքսիների վարորդները կստանան օգնություն: Թե ինչպես պետք է գործեն, ինչ լրացուցիչ տեղեկանքներ պետք է ներկայացնեն, այս ամենի վերաբերյալ SMS հաղորդագրություններ կուղարկենք: Սա շատ հեշտ է,- հայտարարեց նա:

Փոխհատուցում կարող են ստանալ նաեւ այն մարդիկ, ովքեր մշտապես վաճառքի են հանձնել հուշանվերներ կամ գյուղատնտեսական արտադրանք են հանձնել ռեստորաններին եւ այլ հաստատություններին, բայց նրանք պետք է ներկայացնեն նախնական հաշվարկման փաստաթուղթ, ըստ որի, տեղի է ունեցել հանձնողի եւ ընդունող ընկերության միջեւ հանձնման-ընդունման գործընթացը:

Փոխհատուցումը կարող է հասնել նաեւ այն մարդկանց, ովքեր աշխատել են որպես դայակ, դասուսույց, հավաքարար կամ այլ ծառայություններ են մատուցել ֆիզիկական անձանց: Թեեւ, անձը պետք է հաստատի այդ եկամուտը տեղեկանքով այն ընկերությունից, որը գրանցված է որպես հարկատու, որի միջոցով այդ անձը աշխատանքի է տեղավորվել գործատուի մոտ:

Ինչպես նաեւ փոխհատուցում ստանալու հրահանգում ասվում է, որ փոխհատուցում կարող է ստանալ յուրաքանչյուր ոք, ով տնտեսական գործունեություն է իրականացրել եւ եկամուտ է ստացել 2020 թվականի առաջին եռամսյակում, եթե նա կարող է եկամուտ ստանալու փաստն ապացուցել, օրինակ՝ բանկային փոխանցումների քաղվածքի միջոցով:

Որպեսզի մարդիկ միանվագ 300 լարիի չափով օգնությունը ստանան, նրանք պետք է առողջապահության նախարարության www.moh.gov.ge կայքում լրացնեն էլեկտրոնային ձեւաթուղթը, ոչ ուշ, քան հուլիսի 1-ը: Այս ձեւաթուղթը հասանելի կլինի մայիսի 15-ից: Ձեւաթղթում նրանք պետք է նշեն.

- անուն, ազգանուն, անձնական համար
- կոնտակտային տվյալներ (փաստացի հասցե եւ հեռախոսահամար)
- բանկային հաշվեհամար
- մինչեւ արտակարգ դրության հայտարարությունը եկամտի աղբյուրի մասին տեղեկատվություն:

Աշխատանքը կորցրած անձի կողմից հայտադիմումը լրացնելուց հետո, երկու շաբաթվա ընթացքում հատուկ հանձնաժողովը կքննարկի յուրաքանչյուր դեպք եւ համապատասխան որոշումը կփոխանցի Զբաղվածության գործակալությանը, որը 10 օրվա ընթացքում պետք է հոգ տանի փոխհատուցման տրամադրման համար:

էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ